

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 Նոյեմբերի 1992 թ.)

ՍՐԲՈՒԹՅԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՈՂԻ ՎՐԱ

Առաջին խոսքս, սրբազնագույն այս պահին, ես վեր եմ առաքում դեպի մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս, ի խորոց սրտի փառք և գոհություն ընծայելու Նրան, Նրա Տան սուրբ սեղանի առաջ իմ կյանքումը մի անգամ ևս ծնրադրելու, աղոթելու Մայր Աթոռի այս Մայր տաճարի մեջ և փառք տալու Աստծուն, որ կենդանի և առողջ է պահում մեր հայրենիքը, հակառակ այն ծանր պայմաններին, որոնց միջից է անցնում մեր ժողովուրդը Մայր Հայաստանի մեջ: Եվ այս առիթով մեկ անգամ ևս հայցում եմ Աստծուց, որ առողջությամբ, վառ կենդանությամբ և բեղուն գործունեությամբ զորացնի մեր բոլորի սիրեցյալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և իմ ամենասիրելի հոգևոր եղբայրը՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը: Թող նրա տարիների իմաստությունը լույս դառնա մեր ժողովրդի համար և թող Աստված զորացնի նրան Ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանությամբը, Հոգևոր Գերագույն Խորհրդով և հոգևոր ճեմարանով և բոլոր հոգևորական և աշխարհական աշխատակիցներով, որ առավել ևս ճառագայթի Սրբություն Սրբոց Էջմիածինը համայն հայ ժողովրդի կյանքում ի Մայր Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն».

«Երանի նրանց, ովքեր սրտով սուրբ են, որովհետև նրանք պիտի զԱստված տեսնեն»:

Սիրելի հավատացյալներ, երեկ, շաբաթ օր, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց հիշատակը «ամենայն սրբոց, հնոց և նորոց, յայտնից և անյայտից»:

Մեր Եկեղեցին մեր ժողովրդի իմացման և կյանքին մեջ մի անգամ ևս արծարծեց և զորացրեց այն գիտակցությունը, որ քրիստոնեական հավատքը

սուրբ հավատք է և սրբացնող հավատք է: Եվ նրանք, ովքեր իրենց սրտերովը սուրբ չեն կարող լինել, չեն կարող զԱստված տեսնել:

Սրբությունը քրիստոնեության ամենեն հանկուցիչ, գրավիչ, ներշնչող բառերից մեկն է: Ասում ենք, մեր Տիրոջ ուսմունքին հետևելով՝ **«Հայր մեր, որ յերկինս ես, ՍՈՒՐԲ եղիցի անուն քո»**, քո անունը մեր մեջ սուրբ պահվի, որ մեզ սրբացնի: Ապա տեսնում ենք, որ Հիսուս երբ լեռ բարձրացավ և իր այնքան զորեղ և հոգիները գրավող քարոզը խոսեց, որ կոչվում է **«Լերան Քարոզ»:** «Երանիների» շարքը, որը անվանվում է «Փոքրիկ Ավետարան», ինչպես Խրիմյան Հայրիկն է ասել այդ քարոզի համար. «Մարգարիտը երկնից արքայության», այնտեղ, այդ «Լերան քարոզ»-ի մեջ երբ նա ասեց. «Երանի՜ հոգով աղքատաց, երանի՜ սգաւորաց, երանի՜ խաղաղարարաց», այդ «Երանիներ»-ի շարքում ասաց. **«Երանի նրանց, ովքեր սուրբ են սրտով, որովհետև նրանք զԱստված պիտի տեսնեն»:** Երբ Վերջին Ընթրիքից հետո զգում էր, որ պիտի մեկներ այս աշխարհից՝ խաչի և Գողգոթայի ճանապարհով, երբ իր աշակերտներն իրար մոտ էին հավաքվել նրանց մտերմական, բայց խորագոյն բառերով խոսք ուղղեց և դարձավ Իր Հորն Երկնային ու ասաց. **«Հայր, ՍՈՒՐԲ արա զսուսա ճշմարտությամբ քով»:** Իր առաքյալների համար խնդրեց Աստծուն, որ սուրբ անի նրանց: Ապա մենք կարդում ենք Աստվածաշնչում այն սքանչելի խոսքը, որ Սաղմոսաց հեղինակ արքա մարգարեն Դավիթն է ասել. **«Յամենայն ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց ՍՈՒՐԲ արա զիս Տէր»:** «Իմ ամեն ժամանակի, ամեն վայրկյանի աղոթքն այս է, ով, Տեր, որ իմ մեղքերից ինձ սրբիր, սուրբ արա»: Որովհետև մեղքը, անսրբությունը մարդուն հոգեկան չարչարանքին, ներքին տագնապին աղբյուրն է: Սրբությունն այն վիճակն է, որի մեջ մարդ ինքն իրեն մեջ զգում է Աստծու ներկայությունը: Ինչպես մարդը լույսն է տեսնում արեգակի շողերով, այնպես սուրբ է զգում Աստծուն իր մեջ զգալով: Նա ով իր մեջ ունի Աստուծո ներկայության գաղափարը, զգացումը, ձրգտումը՝ նա անպայման սրբության ճանապարհին վրա գտնված կլինի իր կյանքում:

Սիրելիներ, առհասարակ մեր ժողովրդի մեջ սխալ գաղափար է տարածված: Մենք կարծում ենք, որ սրբությունը մի անմատչելի բարձունք է: Ո՞վ կարող է սուրբ լինել: Միայն բացառիկ անձինք, միայն նրանք, ովքեր եկեղեցին ճանաչում են բարձրագույն աստիճանի սովորական մարդկանցից վեր մի անձ: Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ս. Հակոբ, Ս. Գևորգ, Ս. Սարգիս և ուրիշներ: Բայց պետք է մի անգամ միշտ փոխել ըմբռնումը: Ամեն քրիստոնյա սրբության է կոչված, և ինչպես ո՛չ ոք կարող է կատարյալ լինել, բայց չի կարող սրբության չձգտել, այնպես էլ ո՛չ ոք պետք է իրեն թույլ տա սրբության ձգտումովը չապրիլ իր կյանքում, մեր մարդկային տկարությանց և մեր մարդկային կարելիությանց սահմանների մեջ: Ժամանակին, Ա դարում, երբ նոր էր քրիստոնեություն քարոզվում, քրիստոնյաներին **սուրբ** էին կոչում: Սուրբ ազգ. ասում էին սրբերը եկին, սրբերը գնացին: Նրանք ճանաչվեցին որպես սրբության ճանապարհի մեջ գտնվող և հառաջացող մարդիկ:

Եվ դարձյալ այն ըմբռնումը, որ սրբությունը մի հեռավոր, վերնախավային իրականություն է, երկնքի և երկրի միջև տեղ է գրավում: Սրբության այն գաղափարը ճիշտ չէ: Սրբությունը ոչ թե բան մը չլինելուն մեջն է, այլ բան մը լինելու մեջ է: Այլ խոսքով պարզ կասեմ. Կրավորական մոտեցումով սուրբ ըլլալը չէ քրիստոնեական հասկացողությամբ սրբությունը. ոչինչ անե-

լը չէ սրբությունը, քաշվել վանքում մի քարայրում և այնտեղ ինք իրեն միայն ապրել. սոսկ, ներանձնական կյանքով աղոթքով չէ միակ ճանապարհը սրբության: Սրբությունը ավելի ուժական, ներգործական հասկացողությամբ կյանքի երևույթ է: Ինչպես ասել է Ֆրանսիայի Ակադեմիայի անդամներից մեկը, պատմաբան, փիլիսոփա և գրագետ. **«Ես չեմ համբուրի այն ձեռքերը, որոնք մաքուր են, որովհետև ձեռնոցների մեջ են պահվել. ես համբուրում եմ այն ձեռքերը, որոնք ցեխի մեջ են խրվել, ժողովրդին ծառայելու մեջ են աղտոտվել, բայց աղտը չի թափանցել ձեռքերի մեջ, մնացել է ձեռքերի երեսին: Եվ երբ չորանում է ցեխը, կեղտը՝ ձեռքն ավելի մաքուր է երևում, ավելի ապիտակ»:** Ուրիշ խոսքով՝ սրբությունը, սուրբ լինելը առանձնանալ, հեռանալ, զատվել, անջատվել չի նշանակեր: Սրբությունը ճառագայթումն է Աստծո մարդոց կյանքի մեջ: Ես սրբությունը անձի մը համար համեմատում եմ այն պատկերին, այն նկարին, որ մինչև միայն, սոսկ պաստառ չէ, ոչինչ ըլլալ չէ սրբությունը, մաքուր ըլլալ չէ այն իմաստով, որ ոչինչով պիտի ինք իրեն իրագործի այդ անձը: Սրբությունը այդ ճերմակ պաստառի վրա անձին, հավատքին, սիրույն ճառագայթումն է գիծերով, գույներով, այն համադրություններով, այն մթնոլորտով, որ պատկերին կյանք կտա և գեղեցկություն:

Ժամանակը և տարածությունը մեզ տրված պաստառն է: Մարդկային կարողություններն Աստված մեզ է տվել, բայց այդ կարողությունները մենք մեր մեջ պահելով ոչինչ չենք կարող լինել և ոչինչով հավատարիմ լինել Աստծուն և մեր մարդ լինելու կոչումին: Ամեն մարդ Աստուծո աչքի առաջ իր նկարը պիտի գծի, և երբ նկարը սրբության գծերով լինի, այն ատեն է, որ Աստուծո շնորհին և Աստուծո արքայության կարժանանանք: Մենք այնպես պիտի անենք մեր քրիստոնեական կյանքում, որ սրբությունը դառնա մեզ համար ձգտում: Եվ այդ սրբության ձգտումն է, որ առողջ, բարոյականորեն տոկուն, մաքուր, ազնիվ և պատվաբեր կդարձնի մի անձի և մի ազգի:

Եկեք հիմա հարց տանք մենք մեզի: Ինչո՞ւ համար մեր հայրերն այսքան սրբեր են ճանաչել և սրբության գաղափարը այսպիսի ներշնչողական ուժի են վերածել մեր ազգի պատմության մեջ:

Ասում ենք Ս. Եկեղեցի, սուրբ Խաչ, սուրբ Ավետարան, սուրբ Էջմիածին, սուրբ Գիրք, սուրբ Աթոռ, մեկ խոսքով նվիրականագույն բառը մենք հատկացնում ենք այն բոլորին, որ մեր ժողովրդի գերագույն արժեքներն են: Եվ ինչու ենք ասում երբեմն «մեր հայրենիքի սուրբ հողին մատաղ լինենք»: Սուրբ բառը գերագույնն է մարդկային լեզվի մեջ, ամենեն ազնիվ, ամենեն ընտիր բառերից մեկը: Մենք այդ բառն ենք գործածում այդ բոլորի համար, որոնք նվիրականագույնն են մեր գիտակցությանը և հաստատումին:

Մեր ժողովուրդը շատ սուրբեր ունի, սրբերի տոներ ունենք, բայց թույլ տվեք ձեր բոլորին ասել, որ մենք **անունները** ենք պահում, **անձերն** ենք մոռանում: Ս. Հակոբի տոնը կգա, մեզնից ո՞վ կկարդա Ս. Հակոբի վարքը, ո՞վ կանդրադառնա այդ սրբի մեծությանը, ներշնչողական ուժին: Բայց գնում ենք մեր տոների մեջ խրախճանք ենք սարքում, եթե մեր անունը Հակոբ լինի, կամ Սարգիս լինի, կամ Գևորգ լինի կամ մի ուրիշ սրբի անուն: Մենք սրբերի անունները զարդի ենք վերածել, հպարտության առիթ ենք դարձրել. Ս. Գրիգոր Լուսավորիչ ենք ասում, Ս. Մեսրոպ Մաշտոց ենք ասում և սակայն նրանց գաղափարը, հավատքը, զոհողության ոգին, այն բոլորը, որ նրանց սուրբ են արել, այդ բոլորը մեր կյանքի մեջ չենք փոխադրում: Այս է մեր հանցանքը, որ պետք է խոստովանենք, պետք է սրբագրենք:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՍԱՐ

Մանավանդ այսօր երբ «ամենայն սրբոց, հնոց և նորոց, յայտնի և անյայտնի» տոնն ենք նշում մեր եկեղեցու մեջ: Եվ իմ մտքովս հիմա անցնում են այնքան-այնքան անուններ մեր պատմության մեջ, որոնք սակայն չեն ճանաչվել, չեն սրբադասվել, բայց սրբությունն ապրել են իրենց կյանքում: Անծանոթ անհայտ սուրբեր, որոնք ժողովրդի կյանքի մեջ հավատքն են պահել, և որոնց անունները չեն արձանագրվել մեր տոմարներում: Եթե նրանք չլինեին՝ մենք ի՞նչ կարող էինք լինել: Ես այնպես եմ զգում, որ մեր գյուղում, որտեղ մեծացել եմ, այնպիսի մարդիկ և կանայք եմ տեսել, որոնք սուրբ կյանք էին ապրում և նրանք ներշնչեցին մյուսներին: Բայց նրանց մասին չի գրվել և չի գրվելու: Բայց մենք այսօր պետք է ծունկի գանք մեր հոգիներում, աղոթենք, որ Աստված մեզ դրանց հետ հաղորդության մեջ պահի և նրանց սրբությունը մեր կյանքի մեջ ներարկի:

Մենք կարող ենք, սիրելիք, մեր հայրերը սուրբ հայրերը դրամագլխի վերածել, բայց սոսկ դրամագլուխի գաղափարով դրանց հետ չպետք է վերաբերվել. նրանց պետք է մեր կյանքի մեջ փոխարինել, մենք նրանց հոգու մեջ փոխադրվենք. թող կենդանի կապ լինի սրբերի և մեր մեջ, որպեսզի սրբությունը ճառագայթի մեր կյանքում:

Սիրելիներ, իմ վերջին խոսքն այս է, որ սրբության ճառագայթումը բարեգործություն է, սրբության ճառագայթումը անձից դուրս գալն է, ինչպես ճառագայթն արևից է գալիս, և ժողովրդին լույս տալիս: Ժողովրդին բարիք բերել և մեզ այդ բարիքովը ապրեցնել և հավերժացնել: Եթե ես իմ ունեցածը, կարողությունը ես ինձ համար պահեմ՝ ի՞նչ կլինեմ. ոչինչ: Բայց եթե Աստուծո տվածը և Աստուծո տվածի միջից մեր դուրս բերածը ուրիշի հետ բաժանենք, ուրիշով կհարստանանք. սրբությունն ա՛յդ է, որ չես կարող լույսը պահել. լույսը եթե լույս է՝ պետք է ճառագայթե:

* * *

Ահավասիկ մենք այստեղ ենք եկել մի անգամ ևս, «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամի երկրորդ ժողովին ենք մասնակցում Վեհափառ Հայրապետի հետ միասին, և ուրիշ պատվական ազգայինների հետ և՛ Հայաստանից և՛ Սփյուռքից: Ամենայն սրբոց տոնի այս օրը ես ասում եմ, որ սուրբ գործ է դա, որովհետև սուրբ հայրենիքին ծառայելու, նրան տնտեսական, ընկերային, սննդական և վերականգնողական բոլոր կարիքներին մեզ մատաղ անելու, մեր բաժինը բերելու: Եվ սա ոչ թե ստացողը կհարստացնի, տվողը կարբացնի. նա ով կտա, ոչ թե տվածից ընդունողն է, որ միայն կշահե, այլ տվողը հոգևորապես կհարստանա, կհրճվի, կերջանկանա: Երբ ուրիշն ուրախացնես, քո ուրախությունը կբազմապատկվե: Երբ քեզ համար հաց կուտես, մարմնիդ համար կլինի հացը, բայց երբ ուրիշին հաց կտաս, քո մեջ ուրախությունը կլինի և հարստացած նրա ուրախությամբը, կբազմապատկվի քո ուրախությունը:

Անշուշտ մենք բոլորս ալ գիտակից ենք մեր ժողովրդի այս օրերի դրժվարություններին, այն տագնապալի կացության, որին մատնվել է մեր ժողովուրդը: Մարդ ենք, ամենակարող չենք, բայց ինչ որ մեր ձեռքից կգա, ամբողջ կարողությամբ անում ենք և դեռ ավելին պետք է անենք: Բայց այս բոլորի մեջ, սիրելի հավատացյալներ, չմոռանաք, որ նյութական հացով միայն մարդ չի ապրի: Նյութական հացը կենսական է, բայց հոգիին հացը, սրբության հացը, մեր ժողովուրդը առողջ պահող ամենից հզոր ուժերից

մեկն է: Այսօր եկեք խոնարհ սրտով հետևենք Ավետարանի խոսքին, որ ասում է. **«Երանի նրանց, որ սուրբ են սրտով, որովհետև նրանք զԱստված պիտի տեսնեն»:** Ուզո՞ւմ եք Աստուծո ներկայության մեջ երջանկանալ, հրճվել, այսօր մի ուխտ արեցեք այս տոնի առիթով, որ ես պիտի ջանամ իմ կյանքումս քայլել սրբերի ճանապարհով, սրբության ճառագայթը իմ հոգիիս մեջ առնելու, Սուրբ Աստված փառավորելու և իմ հայրենիքը պահպանելու և զորացնելու, մեր ազգի պատվին և հավերժության համար, հավիտյանս, հավիտենից. ամեն: